Երևանի Լեոյի անվան N65 ավագ դպրոց

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ընթերցանությունը ակտիվ գործընթաց տարրական դասարաններում

Հետազոտող ուսուցիչ՝ Գալստյան Նաիրա

Ք. Արարատ Պարույր Սևակի անվ. N2 հիմն. դպրոց՝ դասվար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Ընթերցանության խնդիրներն ու նպատակները
տարրական դասարաններում_____4

Ընթերցանության կարևորությունը, դերն ու
նշանակությունը աշակերտների զարգացման գործում_____6

Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց_____7

Արտահայտիչ կարդալու կարողության
ձևավորման հնարները_____12

Արտահայտիչ ընթերցանությանը ներկայացվող
պահանջները և դրանց իրականացման եղանակները_____14

Եզրակացություն_____16

Օգտագործված գրականության ցանկ_____18

Ներածություն

Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլորր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակալից մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան, ունենա չափելի վերջնարդյունքներ:

Ընթերցումն անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման ձևաչափի, պայմանականորեն բաժանված են երկու բաժինների՝ դասարանային և արտադասարանային: Դասարանային աշխատանքները կապված են մայրենիի առարկայական բովանդակության և նպատակների հետ: Դրանք ընգրկվում են առարկայական տարեկան թեմատիկ պլանավորման մեջ:

Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ՝ դպրոցից դուրս կամ ընթերցանության խմբակի ձևաչափով:

Բոլոր աշխատանքները պետք է պլանավորվեն հանգամանորեն, իրագործվեն հետևողականորեն:

Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում

Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման նպատակն է՝

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները (որակական հատկանիշների պահպանմամբ),
- մաքրել, հղկել և հարստացնել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը, ձևավորել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակություն,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը՝ գաղափարը, հասկանալու, ենթատեքստեր կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու կարողություններ, ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտության գիտակցություն, դրանցով կյանքում առաջնորդվելու ունակություն,
- նպաստել իր երկրի և այնտեղ ապրող մարդկանց զբաղմունքի, մշակութային արժեքների մասին գիտելիքների ձեռքբերմանը,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը,
- աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով ձևավորել պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակակական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին, պայմաններ ստեղծել երեխաների իրավունքների և պարտականությունների մասին, գիտելիքների ձեռքբերման և դրանք գործածելու ուղղությամբ ունակությունների մշակման համար:
- ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով

երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը, ձևավորելով համագործակցային ունակություններ, համակեցության որակներ,

- սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները, գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռք բերման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Ուսուցման գործընթացը պիտի կառուցվի աշակերտակենտրոն սկզբունքով՝ առաջնորդվելով գիտելիքի ձեռքբերում-դրա իմաստավորում և կիրառում-կիրառման ընթացքի վերլուծություն-եզրահանգումների կատարում-նոր գիտելիքի ձեռքբերում շղթայով:

Այսինքն՝ աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռք բերման գործընթացի պասիվ մասնակից, այլ ակտիվ գործընկեր, գիտելիքներ ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն:

Ուսուցումը պիտի իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտելիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները: Այսինքն՝ ուսումնական գործունեության համար պատասխանատու են և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը:

Ընթերցանության կարևորությունը, դերն ու նշանակությունը աշակերտների զարգացման գործում

Շատ կարևոր դեր ունի ընթերցանությունը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում: Զարգանում են ոչ միայն աշակերտների ընթերցողական կարողությունները, հետաքրքրությունները, երեխաների աշխարհայացքը, այլ նրանց գեղագիտական ճաշակը, ստեղծագործական միտքը, կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Իրագործվում են նաև ծրագրային, չափորոշչային պահանջները, աշակերտների մոտ ձևավորվում է սահուն և արտահայտիչ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ, որոնք դառնում են հմտություններ: Տարիներ շարունակ ընթերցանության գործընթացի զարգացման գործում շատ որոշիչ է եղել լրացուցիչ և ինքնուրույն ընթերցանության ներգրավումը: Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը անցկացվել են շաբաթական մեկ ժամ, բայց նյութերը եղել են ծավալուն, ուսուցողական, և արդյունքում աշակերտները ձևավորել են սահուն ընթերցողական կարողություններ:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերին ակտիվ քննարկումներ են արվում, աշակերտներն արտահայտվում են անկաշկանդ՝ արտահայտելով սեփական տեսակետը: Այս դասաժամերին հաճախ դերային խաղի միջոցով աշակերտները մտնում են հերոսների, կերպարների դերի մեջ՝ զգալով նրանց ապրումները: Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն են՝

- սովորողներին ծանոթացնել գրականության տարբեր նմուշներին, որոնք կարելի է ներառել կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները,
- զարգացնել կարդալու հանդեպ ցանկություն՝ ձևավորելով հետաքրքրություն գրքի նկատմամբ՝ որպես գիտելիքների աղբյուր,
- նպաստել սովորողների գրքերի ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունների ձևավորմանը,
- դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ և մշակել ընթերցողական մտահորիզոն:

Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց

Կրթությունը անձի որակական հատկանիշ է: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով՝ ուսումնառության հենց առաջին օրվանից: Ուսումնառության հիմնաքար է համարվում ընթերցողական կարողությունների ձևավորումը: Դա էլ սովորել ցանկանալու և սովորել կարողանալու հիմնական նախապայմանն է: Ընթերցելու հմտություններին տիրապետելը նպաստում է արդյունավետ ուսուցմանը՝ ուսումնառության բոլոր աստիճաններում: Ընթերցողական կարողություններ մշակելու համար ուսուցիչն անգնահատելի ջանքեր է գործադրում: Հաճախ տառաճանաչ դարձած առաջին դասարանցին կորցնում է հետաքրքրությունն ընթերցելու հանդեպ և այն համարում ամենադժվար և ձանձրալի աշխատանքը: Ինչպիսի՞ ջանքեր պետք է ներդնի և ի՞նչ վարպետություն բանեցնի ուսուցիչը, որպեսզի կարողանա սեր արթնացնել ընթերցանության հանդեպ և անընդհատ զարգացնել ընթերցելու կարողությունը: Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ ընթերցել. կարդալ բառերը դեռևս չի նշանակում լավ ընթերցել: Այսօր ընթերցանությունն ընկալվում է ոչ թե որպես սովորելու առարկա, այլև մտածելու և սովորելու գործիք: Այն ներառում է լուռ ընթերցանությունը, մտքերի փոխանակումը ընթերցածի շուրջ, ընթերցվող նյութի հետ կապված տարատեսակ աշխատանքները, ինչպես նաև գրավոր անդրադարձ՝ ընթերցածին: Ըստ ընթերցանության մեթոդիկայի՝ լավ ընթերցել հասկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները.

- ճիշտ կարդալ,
- հասկանալով կարդալ,
- սահուն կարդալ,
- արտահայտիչ կարդալ,
- արագ կարդալ:

Այս հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել ընթերցվող նյութի մասին: Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը կարդալ սովորեցնելն է և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը հատկացվում է հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը: Շատ հաճախ աշակերտները չեն հասկանում հենց նոր ընթերցած

նյութը: Հարց է ծագում. ինչպե՞ս կարող է աշակերտը կարդալ ու չհասկանալ իր կողմից ընթերցվածը: Ի՞նչ կարող է անել ուսուցիչը՝ հասկանալով կարդալու կարողություններ մշակելու համար: Թերևս անհրաժեշտություն է ընթերցանության մեթոդիկայի իմացությունը:

Կարդալը փոքրիկ դպրոցականի համար բարդ գործընթաց է՝ մտածողության, հիշողության, կամքի, ուշադրության և զգացմունքների դրսևորումով: Ընթերցանության մեջ հմտանալու համար փոքրիկը պետք է կարողանա աչքի մեկ ընդգրկումով տեսնել ընթերցանության հիմնական հատվածը: Կարդալու հմտությունները ձևավորվում են երեք փուլով.

1.Վերլուծական
1. Տեսական ընկալման միավորը տառն է կամ վանկը: 2. Ընկալման տեսադաշտը սահմանափակ է: 3. Կարդացածի հասկացումը հետ է մնում արտաբերումից: 4. Վանկերը միացնելու և բառերը կարդալու համար շատ ժամանակ է պահանջվում: 5. Առաջին վանկը կարդալուց հետո աշակերտը փորձում է գուշակել բառը: Գուշակելու այս ձևը հասկանալով կարդալու ձգտման արդյունք է:

2. Համադրական
1. Կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը: 2. Շարունակում է զարգանալ գուշակման գործընթացը: 3. Աշակերտն ունի նախապես ընթերցված բնագրում կողմնորոշվելու հնարավորություն, բառերը փոխարինում է իմաստով մոտ այլ բառերով: Գուշակելու այս ձևը սահուն կարդալու ձգտման արդյունք է:

3. Ավտոմատացված
1. Կարդալու ամենափոքր միավորը դառնում է նախադասությունը: 2. Բնագրի որոշակի հատվածն ընկալվում է ավելի արագ, քան արտաբերվում է: 3. Կանխագուշակման հավանականությունը դառնում է անսխալ: Այս փուլում աշակերտները սահուն կարդում են:

Ավանդաբար ընթերցելու կարողության զարգացման հիմնական ձևերից է համարվել տեքստի շուրջ տարվող բազմաթիվ առաջադրանքների կատարումը: Այդ ընթացքում աշակերտը բազմիցս վերընթերցում է տեքստը: Այդպիսի առաջադրանքներից է.

- տեքստի ամբողջական ընթերցանություն,
- մասերով, հատվածներով ընթերցանություն,
- պլանով ընթերցանություն,
- մեկնաբանություններով ընթերցանություն,
- համառոտակի ընթերցանություն/ընթերցելիս աշակերտները բաց են թողում «ոչ էական» նախադասություններ ու բառեր/,
- շարունակելով ընթերցանություն,
- պարբերություններով ընթերցանություն,
- շշուկով ընթերցանություն,
- նկարազարդումներին համապատասխան հատվածների ընթերցանություն,
- ընտրովի ընթերցանություն,
- տեքստի վերլուծություն՝ ընթերցելով համապատասխան հատվածները,
- դերերով ընթերցանություն՝ անտեսելով նաև հեղինակի խոսքերը,
- ոչ խոսքային միջոցներով՝ տեքստի բովանդակության վերարտադրում,
- ընթերցանություն՝ քերականական առաջադրանքների կատարմամբ,
- վանկատելով ընթերցանություն,
- համատեղ ընթերցանություն (շարքերով, խմբերով):

Մեթոդական այս շղթան, անշուշտ, ձևավորում է կարդալու կարողություն: Մի շարք ուսուցիչներ կարող են հավաստել. ընթերցանության ուսուցման մեթոդական այդ բոլոր քայլերի իրականացումից հետո անգամ,

ընթերցանությունը չի վերածվել ակտիվ գործընթացի: Առաջին հայացքից բոլորովին բարդ չթվացող ընթերցվող նյութերի հիմնական իմաստը, դրանցում տեղ գտած գաղափարներն ու հասկացությունները չեն ընկալվում երեխաների կողմից: Պարզվում է, որ երեխաները, տիրապետելով բառաճանաչողության հմտությանը, չգիտեն, թե ինչպես կարդան, որ կենտրոնանան մտքերի վրա: Պատճառը պարզ է. վատ ընկալողները պարզապես ուշադիր չեն կարդում: Ուսուցչի կողմից բազմիցս կրկնվող հրամանները գրեթե արդյունք չեն տալիս, և աշակերտի գործադրած ջանքերն անարդյունավետ են, ուստի ցուցադրում են միայն ընթերցանության արտաքին կողմը:

Ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց, երբ աշակերտը մտածում է կարդացածի բովանդակության մասին: Ընթերցելիս աշակերտի միտքը դեգերում է շրջապատի տպավորությունների դաշտում և արդյունքում չի ընկալվում կարդացածի իմաստը: Ընդ որում առկա են ապակենտրոնացման բազում պատճառներ: Դրանցից են՝

- անուշադրությունը,
- ընթերցվող նյութի անհետաքրքիր կամ անհասկանալի լինելը,
- աշակերտի անձնական առանձնահատկությունները,
- միջավայրը և այլն:

Չափազանց կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը: Այն պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Այդ կերպ ընթերցանությունը հիմք կհանդիսանա կայուն գիտելիքների հաղորդման, դասի նպատակին համապատասխան կարողությունների և հմտությունների մշակման համար: Կարևոր է նաև դիպուկ, նպատակային հարցադրումները, որոնք կենտրոնացնում են աշակերտների ուշադրությունը և խթանում մտածողությունը: Միաժամանակ նրանց համար հնարավորություն է ստեղծվում բացատրելու իրենց գաղափարները, արտահայտելու կարծիքներ, ներկայացնելու նաև չիմացածը:

Լուրջ ջանքեր պետք է գործադրի աշակերտը՝ կարդացածի միտքն ու իմաստը ընկալելու համար: Այստեղ էլ հենց կարևորվում են ուսուցչի մեթոդական պատրաստվածությունը և աշխատանքների նպատակային պլանավորումը: Ուսուցման վաղ տարիքից և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները պետք է գիտակցեն, որ ընթերցանությունը միջոց է՝

- անձի դաստիարակության,

- ընդհանուր զարգացման,
- գիտելիքների ձեռք բերման:

Այն պետք է դառնա ուսումնական բոլոր առարկաների պահանջների յուրացման հիմք,

- մշակի ինքնուրույն ընթերցանության կարողություններ և հմտություններ,
- հետաքրքրություն առաջացնի գրքի նկատմամբ:

Եթե ուսուցիչն աշակերտներից պահանջում է ընդամենը վերհիշել ու վերարտադրել իրենց կարդացածը, ապա երբեք չի կարողանա պարզել, թե տեքստի ինչպիսի մակարդակի ընկալում է տեղի ունեցել: Տպագիր բառերը կարդալը և մտապահելը դեռևս ակտիվ ընթերցանություն չէ: Որպեսզի կարդացածն օգտակար լինի, դրա արդյունքում ընթերցողի իմացական ոլորտում փոփոխություններ պետք է տեղի ունենան: Ուսուցիչների առաջնահերթ խնդիրն է դառնում օգնել աշակերտներին՝ զարգացնելու ակտիվ ընթերցողական կարողություններ:

Փորձենք հստակեցնել, թե ո՞վ է լավ ընթերցողը:

1. Լավ ընթերցողը հետապնդում է հատուկ նպատակներ՝ ինչի համար ընթերցում է տվյալ նյութը:
2. Լավ ընթերցողը մինչ կարդալը կատարում է կանխագուշակումներ՝ ելնելով վերնագրից կամ նկարազարդումներից՝ կռահում է նյութի բովանդակությունը:
3. Լավ ընթերցողը կարողանում է մտովի պատկերացնել՝ հենվելով սեփական իմացության և հեղինակի կողմից տրված տեղեկատվության վրա:
4. Լավ ընթերցողը վերահսկում է սեփական ընկալումը. վերընթերցում է չհասկացած հատվածը, բառի իմաստը փնտրում բառարանում, կամ կարդացածի իմաստը պարզելու համար դիմում է որևէ մեկի օգնությանը:
5. Լավ ընթերցողը կարողանում է իմացածը զուգորդել ընթերցածի հետ և կառուցել նոր իմացություն:

Օգտագործելով տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու ակտիվ վարժություններ՝ ուսուցիչներիս խնդիրն է ձևավորել այնպիսի ընթերցողներ, որոնք կարողանան կարդալու ընթացքում ձեռք բերված գիտելիքները իմաստավորել, օգտագործել, զարգացնել ակտիվ և խոհուն ընթերցող լինելու կարողություն: Հարկավոր է սովորեցնել նաև կարդալ՝ սոսկ բավականություն ստանալու համար: Պետք է

հասնել այն բանին, որ պարզունակ մտապահման փոխարեն աշակերտները տեքստը ենթարկեն քննության և կատարեն բազմաբնույթ առաջադրանքներ:

Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները

Բարձրաձայն ընթերցանությունն արտահայտիչ է համարվում, եթե այն ունկնդրի մեջ առաջացնում է ուշադրություն և հետաքրքրություն: Իսկ դա կարող է տեղի ունենալ, երբ ընթերցողը բավականաչափ հստակորեն արտահայտում է ստեղծագործության մեջ հեղինակի առաջադրած մտքերը, խոհերը, զգացմունքները, թափանցում է ստեղծագործության գաղափարական ու կերպարային բովանդակության մեջ և, ամենակարևորը, ցանկություն է արթնացնում մինչև վերջ լսելու ընթերցվող նյութերը: Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք որքանով են խորությամբ և ճշտությամբ ընկալել, հասկացել ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ:

Ստեղծագործության իմաստի, գաղափարի ընկալումը ենթադրում է բնագրի ամբողջական նշանակության ըմբռնում: Չէ՞ որ երբ մենք նույնիսկ չենք հասկանում որևէ բառի նշանակությունը նախադասության մեջ, ապա այն կարող ենք կռահել ամբողջ արտահայտության իմաստից:

Յուրաքանչյուր ծավալուն խոսքաշարի մեջ կան իմաստային միջուկներ՝ այն բառերը կամ բառերի խումբը, որոնք որոշում են ամբողջ արտահայտության իմաստը: Դրանք հենակետային բառերն են, որոնք բանավոր խոսքում առանձնացվում են արտահայտչականության միջոցներով, դադարի օգտագործմամբ, տեմպի տարերությամբ և այլն:

Մինչև բնագրի արտահայտիչ ընթերցման նախապատրաստումը ուսուցիչը պետք է՝

1. դիտարկի ստեղծագործության վերնագիրը. պարզի նրա տրամաբանական կապը բնագրի բովանդակության հետ, որոշի վերնագիրը բարձրաձայն կարդալու արտահայտչական միջոցները, ընտրի դրանցից ամենանպատակահարմարը,

2. երկխոսություն կամ կատեխիզիսային (հարց ու պատասխանի ձևով) զրույց կազմակերպի բնագրի շուրջ (դուրս բերի բնագրի «թաքնված» հարցերը, ճշտի վերնագրին տրվող այն մեկնաբանությունները, որոնցով աշակերտներն ընկալեն բնագրի խորությունը, ձևակերպեն նախադասությունները),
3. բնագրի վրա կատարի նշումներ, ընդգծի կարևոր մտքերը, հենակետային բառերը, որոշի հանգուցային նախադասությունները և դրանց բարձրաձայն ընթերցման առոգանական երանգները,
4. որոշի ստեղծագործության գլխավոր գաղափարը և այն երեխաներին ըմբռնելի դարձնելու հնարները, կազմի արտահայտիչ ընթերցանության ուղղությամբ իր կողմից տարվելիք աշխատանքի պլանը:

Բնագիրը հասկանալու կարողության մշակման համար պետք է հասնել այն բանին, որ ուսումնասիրվող նյութը «տեղավորված» լինի աշակերտների սեփական հայացքների ու համոզմունքների համակարգում:

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորման գործընթացը բազմաշերտ է: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է տանել ամենօրյա համակարգված աշխատանք՝ հաջորդաբար լուծելով որոշակի խնդիրներ.

- կարդալ բնագիրը սահուն և հասկանալով,
- կատարել բառային աշխատանք. որոշել հենակետային բառերը, մեկնաբանել անծանոթ բառերն ու արտահայտությունները, տվյալ բնագրում գտնել բազմիմաստ բառերի նշանակությունը,
- վերլուծել բնագիրը՝ բացահայտելով դեպքերի ընթացքը, գործողությունների զարգացման պատճառահետևանքային կապերը,
- որոշել գործող անձանց բնավորությունները, զգացմունքները և տրամադրությունը՝ ստեղծագործության տարբեր հատվածներում,
- պարզաբանել ստեղծագործության գաղափարը, ենթատեքստը և հեղինակի վերաբերմունքն այս ամենի նկատմամբ:

Արտահայտիչ ընթերցանությանը ներկայացվոզղ պահանջները և դրանց իրականացման եղանակները

Գոյություն ունի արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական արտահայտիչ ընթերցանություն և դասարանական արտահայտիչ ընթերցանություն:

Դասարանական արտահայտիչ ընթերցանության իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել հայերենի առոգանության և կետադրական նշանները:

1. Դեռևս գրաճանաչության նախապատրաստակկան շրջանում աշակերտները գործնականում ծանոթանում են որոշ կետադրական նշանների և արտահայտիչ խոսքի միջոցների: Սակայն դրանց սոսկ իմացությունը բավական չէ, անհրաժեշտ է ուսուցման այդ փուլում բացատրել, թե ինչպես պետք է կետադրական կամ առոոգանության որոշակի նշանների առկայության դեպքում կարդալ բնագիրը: Երրորդ դասարանի վերջում աշակերտները պետք է իմանան, թե կետադրական կամ առոգանության որ նշանը ինչ իմաստ ունի և ինչպիսի առոգանությամբ պետք է արտահայտվի կարդալիս:
2. Առոգանությունը արտահայտիչ խոսքի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Այն ընթերցողին հնարավորություն է տալիս պարզ կերպով արտասանել և օգնել ունկնդրել՝ հասկանալու ստեղծագործության յուրաքանչյուր բառի ու արտահայտության իմաստը, գաղափարն ու ենթատեքստը: Ճիշտ առոգանությունը հավասարապես կարևոր է ընթերցողի և ունկնդրի համար:
3. Շնչառություն: Արտահայտիչ ընթերցանությունը բանավոր խոսքի գործընթաց է, որի մեջ մեծ նշանակություն ունի շնչառությունը: Առանց ճիշտ շնչառության հնարավոր չէ կառուցել դյուրըմբռնելի հնչյունային խոսք: Որպեսզի մարդը ձեռք բերի սեփական ձայնին տիրապետելու կարողություն, առաջին հերթին պետք է ճիշտ շնչել սովորի:

   Ընթերցանության ժամանակամիջոցի շնչառությունն էապես տարբերվում է սովորական շնչառությունից: Բնականոն պայմաններում համաչափորեն

իրար են հաջորդում ներշնչելն ու արտաշնչելը, իսկ բարձրաձայն ընթերցանության ժամանակ շնչառությունը դառնում է անհամաչափ, ինքնակամ և կարգավորվող՝ խորը ներշնչումին հաջորդում է փոքր դադարը, իսկ հետո՝ դանդաղ արտաշնչումը: Ճիշտ շնչառությունը մեծ նշանակություն ունի ընթերցողի և ունկնդրի համար: Վերջինիս այն օգնում է ավելի խորությամբ ընկալել ընթերցվող բնագրի բովանդակությունը, հասկանալ գաղափարն ու ենթատեքստը, զգալ հերոսների հոգեկան, հուզակամային վիճակը: Ճիշտ շնչառությունը օգնում է ընթերցողին պահպանել առողջությունը, որովհետև այդ դեպքում օդը տատանվում է, խոնավանում, որից ձայնալարերը չեն չորանում և կարողանում են հնչյուններն արտաբերել ավելի երկար ժամանակ:

4. Ձայնը: Հայտնի է, որ հնչյուններն առաջանում են շնորհիվ թոքերից դուրս մղվող օդի հոսանքի, որը տատանման մեջ է դնում կոկորդում գտնվող զույգ ձայնալարերը: Այդ տատանումից առաջացած հնչյունը կոչվում է ձայն: Երեխաներին պետք է բացատրել, որ ընթերցելիս անհրաժեշտ է ձայնը արտաբերել մաքուր, ազատ, բնական, հնչուն և բավականին բարձր: Հարկ է հիշել, որ ընդունված նորմից ցածր ձայնով ընթերցելը ոչ միայն ձանձրացնում է ունկնդիրներին, այլ նաև վատ է ընկալվում:

Արտահայտիչ ընթերցանության ժամանակ ամենացանկալին միջին ուժգնություն և միջին բարձրություն ձայնն է:

Եզրակացություն

Եզրակացություն գրելիս կուզեի կիսվել իմ սեփական փորձով: Մեր դպրոցը առաջիններից էր, որ ընդգրկվեց «Ընթերցանությունը տարրական դասարաններում» ծրագրի շրջանակներում: Տրվեցին գնահատման չափանիշներ ստուգաթերթի միջոցով, որոնք պետք է օգնեին ստուգել սովորողների ընթերցման որակական հատկանիշները (սահունություն, արագություն, արտահայտչականություն, ընթերցածը ըմբռնելու կարողություն): Իհարկե, մենք մասնակցեցինք սեմինարի, որը մեզ կողմնորոշեց, թե ինչպես աշխատել՝ կարճ ժամանակում լավագույն արդյունք ունենալու համար: Սկզբում առաջացան դժվարություններ, նույնիսկ խուճապ, բայց տնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորման նախագահի փոխհամագործակցության, փոխօգնության միջոցով կարողացանք հաղթահարել բոլոր դժվարությունները և կարճ ժամանակում ունեցանք հաջողություն:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված էին երկու երկրորդ դասարանները, և երկու դասարաններում էլ ունեցանք աննախադեպ հաջողություն:

Մշտապես ուղղորդված ընթերցանության ստուգումը, իրենց ընթերցածի շուրջ հարցերի ինքնուրույն ձևակերպումը, դասընկերների կողմից առաջարկվող հարցերին պատասխանելը, մեկ րոպեում ընթերցած բառաքանակի հաշվումը և համեմատումը աշակերտների մոտ առաջացրեց առողջ մրցակցություն և ոգևորություն:

Ընթերցողական կարողությունների ձևավորման տեխնոլոգիայի հետևողական կիրառման դեպքում երեխաներն ըմբռնում են դասերից դուրս նույնպես ընթերցանությամբ զբաղվելու անհրաժեշտությունը, դուրս են բերում անծանոթ բառերը, բացատրում բառարանի օգնությամբ, բացահայտում կերպարների բնավորության գծերը՝ հարստացնելով բառապաշարը, երևակայությունը, սերը ընթերցանության նկատմամբ:

Իհարկե, ոչ պակաս կարևոր է ուսուցչի ամենօրյա, հետևողական աշխատանքը, ստուգումները, քննարկումները, և, իհարկե, ոգևորելը: Արդյունքում

աշակերտների մոտ զարգանում են լուռ ու բարձրաձայն կարդալու կարողություններ:

Շատ հաճախ դասղեկի ժամերը նույնպես նվիրվում էին ընթերցանությանը: Երեխաները մեծ սիրով և ոգևորությամբ ներկայացնում էին իրենց ընթերցած լրացուցիչ գրքերը, ներկայացնում էին նաև իրենց դուր եկած կերպարները՝ երբեմն էլ դերային խաղով:

Աշխատատար, բայց նպատակային աշխատանք էր, և ես շնորհակալ եմ բոլոր կազմակերպիչներին, քանի որ ինձ համար նույնպես որոշակի բացահայտումներ արեցի: Այսուհետ, բոլոր դասարաններում կկիրառեմ այս փորձը, քանի որ պտուղները քաղելիս մեծ բավականություն եմ ստանում:

Բազմիցս փոխտնօրենը անծանոթ տեքստ է բերել դասարան, որը հեշտությամբ ընթերցել են երեխաները: Շատ եմ կարևորում ընթերցանության դերը ուսուցման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

- Նախաշավիղ 3-4.2001
- Նախաշավիղ 3-4.2009
- Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն «Ընթերցանությունը տարրական դպրոցում» (մեթոդական ուղեցույց)
- «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Ջուլիետա Գյուլամիրյան, Երևան, 2006թ.